

Հանդիպում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի նեկայացուցիչների հետ

Նոյեմբերի 25-ին Գորիսի քաղաքապետարանում տեղի ունեցավ հանդիպում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի նեկայացուցիչների հետ, որին մասնակցում էին ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական Վոլոդյա Հովհաննիսյանը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը, կրթության բաժնի պետ Հայկ Հարությունյանը, քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարներ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Սյունիքի մարզի փոքր համայնքներում նախադպրոցական այլընտրանքային ծառայություններ ստեղծելու վերաբերյալ ծրագրին առնչվող հարցեր:

Անդրադառնալով ընտրված համայնքների հնարավորություններին, ներուժին՝ ծրագրի պատասխանատուների հետ պայմանավորվածություն ձեռքբերվեց ծրագրին պատրաստակամություն հայտնած 16 համայնքների նեկայացուցիչների հետ տեղերում քննարկումներ կազմակերպելու:

Մարզպետի խորհրդական Վ. Հովհաննիսյանը ողջունելով նախաձեռնության հեղինակներին, իր շնորհակալությունը հայտնեց արդյունավետ համագործակցության համար:

Ծրագիրն իրականացնելու համար նախնական ընտրվել է 23 համայնք: Այն մասնակի կֆինանսավորվի ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջոցներով: